

„ Եւր , այս հետեւեալ հռչակաւոր տու-
„ զերով

Ի փենցաղոյս յայս խրախճան
կացեալ զըժբաղդ եւ մեռանիմ
Ես առօրեայ բազմական .
Սեռանիմ գնամ յամր ի շիրիմ ,
Յոր ոչ ելցեն այցելութե ,
Ոչ կաթեսցեն արտասուք :

„ Սրոյ քանի մը բարակ երակներ
„ ստորերկրեայ աղբիւրներէ բղխելով
„ շատրուան մը կը ձեւացնեն , որ կ'ը-
„ սուի Շապորաւան Սամարայայն : 1813ին
„ մէջը քանի մը ոսկեգոյն Չինաստանի
„ ձկներ ձգեցին , որոնք երկար ժամա-
„ նակ ապրեցան , բայց չբազմացան :

„ Ես կամարակապ ճամբաներս ,
„ որոնցմէ մէկն ինչուան 7 հազարա-
„ մէջը երկայն է , թանձր օդ մը ու-
„ նին , նեղիչ խոնաւութեամբ մը զան-
„ դուած : Ես մանակէ մը ետեւ այցե-
„ լութ սրտի անձկութիւն մը կը զգան :

„ Ես յետեւութիւնը լմննալէն վերջը ,
„ դամբարանին դուռը կը գոցուի , և
„ նորէն այն սեւ գծին ետեւէն կ'եր-
„ թան : Երբոր սանդղոյն կը հասնին
„ ուսկից որ ներս մտան , պահապանը
„ դարձեալ կը համրէ այցելուները , չը-
„ լայ թէ մարդ պակաս ըլլայ : Որոնք
„ երբոր լոյս կը տեսնեն , մեծ հաճու-
„ թիւն մը կը զգան , — մասնաւորապէս
„ կանայք , որոնք այս անգամ բազմա-
„ թիւ էին , — և անպատմելի սփոփանք
„ մը :

Մանր գիտելիք :

Գեղեթիւն : — Ըստ հաւանական հաշուի ան-
գղիացի լրագրի մը , մինչև հիմա փորուած ածխա-
բեր երկրին մակերևոյթն է իբր 20,711 քառա-
կուսի հազարամէջը , միջին խորութիւնն 9 մէթր :
Արդ բազմաթիւ իրարու հետ երկրիս ընդերայ
մէջ թաղուած ածուխն ու տարուէ տարի սպա-
ռուած ածուխը , մարդս կրնայ ապահով ըլլալ որ
գեղեթիւն բաւական ածուխ մինչև Երեսնամեջ հա-
զար քառակուսի հանուած ածուխին գինն
է 937,300,000 ֆրանգ . այնպէս որ տարուան մը

մէջ ելած մեծայարգ մետաղները միանգամայն այս-
չօք արժէք չունին :

Վարդէլուր առանց Լուրանոյ : — Լրագրոց մէջ
հետեւեալ հնարքը կը կարգանք վարդէլուր հանե-
լու առանց թորանոցի :

Պէտք է ընտրել մայիսի հոտաւէտ վարդերը , և
առնուլ անոթ մը 45 կամ 50 հարիւրորդամէջը
բարձր , բերանը լայն , յատակն անձուկ , ու ներ-
քին կողմը վեռնիճոտած : Բերանոյն վրայ հաս-
տատէ խոշոր հիւսուած կանեփեայ լայն կտաւ
մը , որ անոթին մէջ կախուի քսակի նման , որուն
մէջ կը լեցուին վարդին ծաղկաթերթերը : զորոնք
ծածկէ նոյն կտաւով ու վրան փակուր մազտա-
քէով երկաթի կամ անագէ թիթեղ մը , այն-
պէս որ ճիշդ անոթը խփէ : Դիր այս խփին վրայ
տաք մոխիր , և վառէ թեթեւ ու հանգարտ կրակ
մը միակերպ , վառն զի սաստիկ կրակը ծաղկաթեր-
թերը կ'այրէ , և բոլոր աշխատութիւնն անպտուղ
կը մնայ :

Վարդին հոտաւէտ մասը կը կաթէ անոթին յա-
տակը՝ ծաղկաթերթից մէջ բովանդակուած ջրով ,
երբ կը հասկըցուի որ ալ ջուր չկաթեր ծաղկա-
թերթերէն , շուտ մը կրակը մարէ , և յառաջ քան
բանալու անոթին բերանը թող որ բոլորովին պա-
ղի , և գործողութիւնը կը լմննայ :

Իրաւ այս կերպով հանուած վարդէլուրը յըս-
տակ չէ , ինչպէս է թորանոցէ ելածը . բայց անոր
ամէն որակասութիւններն ունի :

Գործաւոր Խանայ , Անգղիա : — Ըստ վերջին աշ-
խարհահամարին Անգղիոյ մէջ զարգարար և գեր-
ձակ կանանց թիւն էր 267,711 . շապկեղէն գոր-
ծող և կարող կանանց թիւն էր 73,068 : Միայն
Պրիմիկէմի մէջ աւելի քան 1100 ու 1200 աղջ-
կունք մետաղեայ գրչաց գործարանները կ'աշխա-
տին , 600 աղջկունք անագէ գրչաց գործարաննե-
րը , և 300 աղջկունք գնդասեղաց գործարաննե-
րը : Լոնտրոն աւելի քան 150,000 գործաւոր կա-
նայք կան , որոնց աւուրչէքն երբեք չանցնիր
1-25 ֆրանգն . ու շատ անգամ մեծ բաղդ կը հա-
մարուի եթէ կարող ըլլան ասոր կէտը վաստակել :
Բոլոր տարին , միջական հաշուով , աշխատութիւ-
նը չկրնար տալ այն թշուառներուն օրն 50 հա-
րիւրորդէն աւելի :

Նոր Բիւնիսի և Բրիտանիա : — Սան-Ֆրանչիս-
գոյ 'ի Չիլէ մօտերս նոր ոսկեհանք և արծաթա-
հանք գտուեր են , շատ աւելի հարուստ քան մին-
չև հիմա եղածներն : Այս աւետեաց երկիրը Վա-
շի կ'ըսուի , և Գալիֆոռնիայէն սկսան բազմաթիւ
գաղթականներ երթալ այս հանքերը փորելու , որ
մէկ տակառաչափ հողէն 10,000 տոնարի մետաղ
կ'ելլէ : Գալիֆոռնիոյ ներսերէն եկած լուրերը
կը պատմեն թէ բնակիչներն այն կողմանց , կար-
գաւորեալ գաղթականներ բաժնուած , սկսեր են
իմանալ թէ ինչպէս այն բերրի դաշտերը մշակելն
չահաւէտ է և անսպառ քան թէ ոսկւոյ հանքերը :